Կազմակերպության անվանումը		«Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ
Գործունեության հասցե *(քաղաք, հասցե, հեռախոս, էլ.-փոստ)*		ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբ, տուն 16, blejanli@gmail.com
Կազմակերպության ղեկավարի անունը, ազգանունը և պաշտոնը		Լիաննա Ասոյան, նախագահ
Բանկի անվանումը և հասցեն		«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի «Գեղարքունիք» մասնաճյուղ
Հաշվարկային հաշիվ		220083350060-100
ՀՎՀՀ		08416584
Համագործակից կազմակերպություն		«Գեղարքունիքի մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ
Ծրագրի անվանումը		**Քաղաքացիական մասնակցության և կամավորության խթանում**
Ծրագրի տևողությունը		3,5 ամիս
Ծրագրի իրականացման վայրը		Ք. Գավառ
Ծրագրի պատասխանատուի անունը, ազգանունը և պաշտոնը		Լիաննա Ասոյան, ծրագրի ղեկավար
Ծրագրի պատասխանատուի հեռախոսահամարները *(աշխ., բջջ.)*		(0264) 6-15-11, (091) 76-46-41
Ծրագրի պատասխանատուի էլեկտրոնային փոստի հասցեն		asliza28@rambler.ru
Ծրագրի ընդհանուր արժեքը		943575
Դիմող կազմակերպության		223450
Հայցվող գումարը		**720125**
Ծրագրի ներկայացման ամսաթիվը		21.04.2011

1. Գործադիր ամփոփում

Սոցիալ-տնտեսական, արտագնա աշխատանքի, կրթական ու մշակութային հիմնախնդիրների կողքին մարզային երիտասարդներն ունեն նաև ինքնաարտահայտման, ինքնադրսևորման, անձնային զարգացման և կայացման, ինտեգրման, հասարակայնորեն պահանջված լինելու, միջազգային շարժունակության սահմանափակման խնդիրներ: Այդ խնդիրները տրամաբանորեն շաղկապված են և, որպես կանոն, հանգեցնում են նրան, որ երիտասարդները մեկուսանում են, կորցնում հավատը սեփական ուժերի հանդեպ ու չեն փորձում ինչ-որ բան նախաձեռնել:

Ժամանակակից կյանքը հատկանշվում է արագ փոփոխություններով: Արագ փոփոխությունների կենսաձևը յուրաքանչյուր անձի, առավել ևս երիտասարդ մարդու համար կենսախնդիր է դարձել պատասխան ունենալ արդի մարտահրավերներին, որոնք բազմաթիվ են ու բազմաբնույթ: Այդ հանգամանքներով պայմանավորված՝ յուրաքանչյուր երիտասարդ մարդու ինքնադրսևորման, կայացման, հասարակայնորեն պահանջված լինելու համար մեր կողմից կարևորվում է երիտասարդական մասնակցության, անձնային մոտիվացման, նախաձեռնողականության և սոցիալական կայացման խթանումը, որոնք հանգեցնելու են քաղաքացիական ակտիվիզմի զարգացմանը:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել ակտիվ ու արդյունավետ քաղաքացիության և կամավորականության զարգացմանը Գավառ քաղաքում:

Ծրագրի նպատակին հասնելու համար իրականացվելու են ներքոհիշյալ խնդիրները:

- Ծրագրում ընդգրկել քաղաքացիական ակտիվ և կամավորական աշխատանքի մեջ ներգրավվել ցանկացող 10-15 երիտասարդներ:
- Կազմակերպել և իրականացնել թիրախ խմբի համար «Քաղաքացիական մասնակցություն և կամավորություն» խորագրով 12, թվային հմտությունների, ինտերնետի ու նրա հնարավորությունների մասին 2 դասընթացներ:
- Իրականացնել անգլերենի երկամսյա ուսուցում կամավորների միջոցով:
- Իրականացնել էքսկուրսիա Երևան մասնակիցների միջև վստահության կառուցման նպատակով:
- Կազմակերպել թիրախ խմբի համար հանդիպումներ Գավառի 5 ՔՀԿ-ներում «Բաց դռներ» ձևաչափով:
- Գավառի ՔՀԿ-ների առաջարկներով կազմել կամավորի ներգրավման ուղեցույց:
- Ստեղծել քաղաքացիական ակտիվ աշխատանքում ներգրավել ցանկացող երիտասարդների տվյալների շտեմարան և տրամադրել շահագրգիռ ՔՀԿ-ներին:

Ծրագիրը կնպաստի Գավառ քաղաքի երիտասարդական ներուժի զարգացմանը, կառաջացնի յուրատեսակ ռեզոնանս, կհանգեցնի նոր գաղափարների և նախաձեռնությունների, կնպաստի քաղաքացիական ակտիվիզմին և կամավորականության նոր հնարավորությունների կիրարկմանը և Գավառի ՔՀԿ-ների միջև գործընկերային կապերի և համագործակցային պատասխանատվության ամրապնդմանը:

Ծրագիրը կիրականացվի Գավառ քաղաքում, 3,5 ամսվա ընթացքում, 2011թ. 16 մայիս-31 օգոստոս ժամանակահատվածում, 2 փուլով, 3 հոգանոց աշխատակազմի և հրավիրված 2 փորձագետների կողմից:

Ծրագիրը մշակվել և առաջարկվում է «Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության և «Գեղարքունիքի մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ների կողմից: Այն համահունչ է հայտատու ՀԿ-ների առաքելությանը և ռազմավարական նպատակներին: Հայցվող գումարը կազմում է 720625 դրամ:

2. Հիմնախնդրի ձևակերպում

Մեզանում երիտասարդությունը հանդես չի բերում իր ներուժին համարժեք քաղաքացիական ու քաղաքական մասնակցություն: Երիտասարդությունը, որ կարող է պետք է լինի ազդեցիկ գործոն, վերածվել է տարբեր խմբակային շահերի սպասարկող գործիքի, և երիտասարդների ճնշող մեծամասնությունը չի կարևորում տարբեր ոլորտներում իր մասնակցությունը: Ասվածն ավելի բնութագրական կարելի է համարել մարզաբնակ երիտասարդների, ուսանողների առնչությամբ:

Գավառ քաղաքը ներկայումս դարձել է ուսանողական կյանքի կենտրոն՝ շնորհիվ քաղաքում հիմնված Գավառի պետական համալսարանի: Սակայն ուսանողները չունեն բավարար չափով պատկերացում և մոտիվացիա՝ մասնակցելու ՔՀԿ-ների (ուսանողական ինքնակառավարման մարմինների, ՀԿ-ների, այլ հասարակական միավորումների) աշխատանքներին: Առանձին խումբ են կազմում նաև այն երիտասարդները, ովքեր ձգտում և ցանկություն ունեն ներգրավվելու տարբեր ՔՀԿ-ներում՝ որպես կամավորներ, սակայն չունեն բավարար պատկերացում և ունակություններ ՀԿ ոլորտի, կամավորականության, նրա արժեքային համակարգի, սոցիալական դերի, ինչպես նաև կամավոր-ՀԿ փոխադարձ պարտականությունների և իրավունքների, երիտասարդների միջազգային կամավորականության մասին: Մինդեռ հենց ուսանողական տարիների ընթացքում, տարբեր ՔՀԿ-ների շնորհիվ ուսանողները կարող են ստանալ հասարակական աշխատանքի, ինքնակառավարման, տարբեր նախաձեռնություններով հանդես գալու որոշակի փորձ, ինչի շնորհիվ հետագայում իրենք ևս կհիմնեն ՔՀԿ-ներ և կդառնան հասարակական գործիչներ: Այս հետաքրքրություններ ունեցող երիտասարդներն էլ են հենց հանդիսանալու առաջարկվող ծրագրի շահառուները:

Բացի այդ, շատ հաճախ ՔՀԿ-ները չեն կարևորում կամավորներ դառնալ ցանկացող երիտասարդների ունակությունները, սակայն կամավորների հետ աշխատանքի ընթացքում ի հայտ են գալիս բազմաթիվ խնդիրներ: Իր հերթին անհրաժեշտ տեղեկատվության, ունակությունների պակասը, ինչպես նաև օրեցօր ավելի ու ավելի պահանջված դարձող լեզվական, թվային հմտությունների, ինտերնետային հնարավորությունների իմացության և կիրառման խնդիրների իմացության պակասը չեն նպաստում երիտասարդների քաղաքացիական ակտիվ և կամավորական աշխատանքին: Արդյունքում՝ երիտասարդները մեկուսանում են, կորցնում հավատը սեփական ուժերի հանդեպ ու չեն փորձում ինչ-որ բան նախաձեռնել:

Ծրագիրն ուղղված է քաղաքացիական ակտիվ և կամավորական աշխատանքի մեջ ներգրավվել ցանկացող երիտասարդների մոտիվացմանը, ինքնադրսևորմանը, անհատական զարգացմանը, հասարակայնորեն պահանջված լինելուն, փոխօգնության խթանմանը, հաղորդակցության և համակեցության հմտությունների զարգացմանը:

Այս ամենը նախ և առաջ ենթադրում է համայնքային մակարդակում քաղաքացիական ակտիվության և կամավորականության շարժման խթանում և համակարգում տեղական ՔՀԿ-ների գործունեության տիրույթում:

Ծրագիրը նախատեսում է երկու բաղադրիչների կիրառում՝

1. կամավորներ պատրաստելու նպատակով թիրախ խումբ հանդիսացող երիտասարդների գիտելիքների և ունակությունների աճի ապահովում,
2. համագործակցություն և աջակցություն տեղական ՔՀԿ-ների հետ՝ երիտասարդներին որպես ակտիվիստներ և կամավորներ ներգրավելու աշխատանքում:

3. Ծրագրի նկարագրությունը

3.1. Ծրագրի նպատակը

Նպաստել ակտիվ ու արդյունավետ քաղաքացիության և կամավորականության զարգացմանը Գավառ քաղաքում:

3.2. Ծրագրի խնդիրները

- Ծրագրում ընդգրկել 10-15 երիտասարդներ, ովքեր ցանկանում են ներգրավվել քաղաքացիական ակտիվ և կամավորական աշխատանքի մեջ:
- Կազմակերպել և իրականացնել թիրախ խմբի համար «Քաղաքացիական մասնակցություն և կամավորություն» խորագրով ընդհանուր թվով 12 դասընթացներ՝ ուղղված մասնակիցների անհատական զարգացմանը, կամավորության և մասնակցային ներգրավման խթանմանը, քաղաքացիական ակտիվ կյանքի նախապատրաստությանը:
- Իրականացնել անգլերենի երկամսյա ուսուցում շահագրգիռ մասնակիցների համար կամավորների միջոցով:
- Իրականացնել թվային հմտությունների, ինտերնետի և նրա հնարավորությունների մասին 2 դասընթաց:
- Իրականացնել էքսկուրսիա Երևան մասնակիցների միջև վստահության կառուցման նպատակով:
- Կազմակերպել թիրախ խմբի համար հանդիպումներ Գավառի 5 ՔՀԿ-ներում «Բաց դռներ» ձևաչափով՝ տեղական ՔՀԿ-ների գործունեության տիրույթում քաղաքացիական ակտիվության և կամավորականության խնդիրների քննարկման նպատակով:
- Գավառի ՔՀԿ-ների առաջարկներով կազմել կամավորի ներգրավման ուղեցույց:
- Ստեղծել տարբեր ՔՀԿ-ներում որպես կամավորներ կամ քաղաքացիական ակտիվ աշխատանքում ներգրավել ցանկացող երիտասարդների տվյալների շտեմարան և տրամադրել Գավառի շահագրգիռ ՔՀԿ-ներին:

3.3. Ակնկալվող արդյունքները

- Ծրագիրը կնպաստի Գավառ քաղաքի երիտասարդական ներուժի զարգացմանը:
- Այն յուրատեսակ ռեզոնանս կառաջացնի Գավառի երիտասարդական կյանքում, կհանգեցնի նոր գաղափարների և նախաձեռնությունների:
- Ծրագրում ներգրավված երիտասարդներն իրենց ստացած տեղեկությունները, հմտությունները, տպավորությունները կկիսեն հասակակիցների հետ, ինչը հետագայում խթան կհանդիսանա, որպեսզի այլ երիտասարդներ ևս հետաքրքրություն ցուցաբերեն ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների և հասարակական կյանքին մասնակցելու նկատմամբ:
- Գավառի ՔՀԿ-ների միջև կամրապնդվեն գործընկերային կապերը, կզարգանա համագործակցային պատասխանատվությունը:

- Երիտասարդները կընդգրկվեն ՔՀԿ-ներում՝ որպես կամավորներ: Կարող են մատուցել կամավորական ծառայություններ տեղական հեռուստատեսությանը:
- Տարբեր ՔՀԿ-ների միջոցառումներում ընդգրկվելով՝ երիտասարդները հնարավորություն կունենան զարգացնել իրենց նախաձեռնողականությունը, իրենց պահանջված կզգան, կառաջանա վստահություն սեփական ուժերի հանդեպ:
- Ծրագիրը կնպաստի քաղաքացիական ակտիվիզմին և կամավորականության նոր հնարավորությունների կիրարկմանը:
- Ծրագրի շահառուները կզարգացնեն իրենց քաղաքացիական հմտությունները, դիրքորոշումը, պատասխանատու և ակտիվ քաղաքացիության որակները:

3.4. Ծրագրի իրականացման մեխանիզմը

Ծրագիրը կիրականացվի Գավառ քաղաքում, 3,5 ամսվա ընթացքում, 2011թ. 16 մայիս-31 օգոստոս ժամանակահատվածում, 2 փուլով: Ծրագրի առաջին կես ամսում (մայիսի 16-31) ֆինանսական գործառույթներ չեն իրականացվի, և ծրագրի աշխատակազմը կաշխատի կամավորական հիմունքներով: Այս ժամանակահատվածը հնարավորություն կտա բավականաչափ ժամանակ տրամադրել նախապատրաստական աշխատանքներին՝ նպաստելով ծրագրի հետագա ընթացքի արդյունավետությանը:

1-ին, նախապատրաստական փուլ, տևողությունը 1 ամիս:

- Պատրաստել հայտարարության տեքստ և հայտի ձև երիտասարդների ներգրավման համար:
- Հայտարարել մասնակիցների հավաքագրում:
- Իրականացնել հայտերի ընդունում և մասնակիցների ներգրավում:
- Կնքել պայմանագրեր ծրագրի աշխատակազմի և փորձագետների հետ:

2-րդ, ուսուցողական և համագործակցությունների հաստատման փուլ, տևողությունը 2,5 ամիս:

- Իրականացնել «Քաղաքացիական մասնակցություն և կամավորություն» խորագրով ընդհանուր թվով 12, ինչպես նաև թվային հմտությունների, ինտերնետի և նրա հնարավորությունների մասին 2 դասընթացները շաբաթական 2 օր, 3-ական ժամ տևողությամբ:
- Կազմակերպել և իրականացնել անգլերենի երկամսյա ուսուցում շահագրգիռ մասնակիցների համար (առավելագույնը՝ 7 անձ), ծրագրի 1-ին և 2-րդ ամիսներին՝ շաբաթական 2 օր, իսկ 3-րդ ամսում՝ շաբաթական 3 անգամ, 2-ական ժամ տևողությամբ: Ընդհանուր հաշվով՝ կիրականացվեն 18 դասընթացներ: Անգլերենի դասընթացներն իրականացվելու են «Գեղարքունիքի մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ի 2 կամավորների կողմից և ծրագրի համակարգողի կողմից՝ որպես ներդրում: Այս աշխատանքներին աջակցություն կցուցաբերվի նաև անգլերենի ուսուցման աշխատանքներ իրականացնող ԱՄՆ «Խաղաղության կորպուս» կազմակերպության կամավորի կողմից, ում հետ ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն: Նա կմասնակցի դասընթացներին՝ իրականացնելով մեթոդաբանական օգնություն, ինչպես նաև կշփվի մասնակիցների

հետ՝ նրանց վստահություն ներշնչելու և բանավոր խոսքի զարգացմանը նպաստելու նպատակով:

- Պատրաստել մասնակցության վկայագրեր և շնորհել մասնակիցներին:
- Իրականացնել 1 էքսկուրսիա Երևան մասնակիցների միջև վստահության կառուցման նպատակով: Էքսկուրսիայի ընթացքում այցելել 1 թանգարան և 1 թատրոն:
- Կազմակերպել թիրախ խմբի համար հանդիպումներ Գավառի 5 ՔՀԿ-ներում «Բաց դռներ» ձևաչափով՝ տեղական ՔՀԿ-ների գործունեության տիրույթում քաղաքացիական ակտիվության և կամավորականության խնդիրների քննարկման նպատակով: Հանդիպումների առաջարկություն է արվելու հետևյալ ՔՀԿ-ներին՝տեղական հեռուստատեսություն, Գեղարքունիքի ԾՊԱԿ, Երիտասարդ իրավաբանների հայկական ասոցիացիայի Գեղարքունիքի մասնաճյուղ, «Վորլդ վիժն» կազմակերպության Գավառի գրասենյակ, Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի Սոցիալական կենտրոն:
- Գավառի ՔՀԿ-ների առաջարկներով կազմել կամավորի ներգրավման ուղեցույց, որը կհանդիսանա իբրև կամավորների ներգրավման փաթեթ: Ուղեցույցը կպատրաստվի գրքույկի ձևով և կտրամադրվի ՔՀԿ-ներին: Բովանդակային առումով ուղեցույցը կլինի առավելագույնս գործնական և հնարավորինս կխուսափենք տեսական նյութի ներառումից: Ուղեցույցի տրամադրման աշխատանքները կիրականացվեն նաև ծրագրից հետո:
- Ստեղծել տարբեր ՔՀԿ-ներում որպես կամավորներ կամ քաղաքացիական ակտիվ աշխատանքում ներգրավել ցանկացող երիտասարդների տվյալների շտեմարան և տրամադրել Գավառի շահագրգիռ ՔՀԿ-ներին:

Ծրագրում իրականացվող «Քաղաքացիական մասնակցություն և կամավորություն» խորագրով դասընթացների թեմաներն են՝

1) Քաղաքացիական հասարակություն,
2) ՔՀԿ կառույցներ, նրանց տեսակները, առանձնահատկությունները,
3) Մասնակցություն և կամավորություն,
4) Կամավորության հնարավորությունը ԵՄ-ի «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրում,
5) Շրջակա միջավայրի պաշտպանություն,
6) Օրհուսի կոնվեցիան և նրա կիրառումը,
7) Ոչ ֆորմալ կրթության ներածություն,
8) Ինքնաներկայացում. ինչպես պատրաստել ինքնակենսագրություն(CV),
9) Մարդը մարդկանց մեջ. միջանձնային արդյունավետ հաղորդակցություն,
10) Միջմշակութային հարաբերությունների ներածություն,
11) Արդյունավետ թիմային աշխատանք և բախումների լուծում,
12) Ծրագրային գործունեություն: Ինչ է ծրագիրը, ծրագրային մշակույթ:

Դասընթացները կիրականացվեն ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանական սկզբունքներին համահունչ՝ մասնակցային վարժություններ, խաղեր, անհատական և թիմային առաջադրանքներ, հարցադրումներ, մտքերի գրոհ և այլն: Կխրախուսվեն փոխօգտնությունը և թիմային ոգին, մասնակիցների գնահատումը և առաջարկությունները: Նյութերը տպագիր ձևով կտրամադրվեն մասնակիցներին:

3.5. Ծրագրի աշխատակազմ և հրավիրված փորձագետներ

Անուն, ազգանուն	Պաշտոն	Աշխատանքների ժամկետ (ամիս)	Պարտականություններ
Լիաննա Ասոյան	Ծրագրի ղեկավար	3,5 ամիս	Ծրագրի աշխատանքների ընդհանուր ղեկավարում: Ծրագրի ընթացքի, ռեսուրսների արդյունավետ օգտագործման կազմակերպում, անհրաժեշտ պայմանագրերի կնքում, հաշվետվությունների ներկայացում: Իրականացնելու է 1 դասընթաց («Օրհուսի կոնվեցիան և նրա կիրառումը»)՝ որպես ներդրում:
Սոնա Խաչիկյան	Համակար-գող	3,5 ամիս	Մասնակիցների ներգրավում: Բոլոր միջոցառումների նախապատրաստական և ընթացիկ աշխատանքներ: Պարտավոր է ծրագրի ընթացքում ապահովել անհրաժեշտ գնումները: Կազմակերպում է փորձագետների աշխատանքը, պատասխանատու է սեմինարների կազմակերպման, սեմինարների նյութերի բազմացման համար: Անգլերենի ուսուցման իրականացում՝ որպես ներդրում:
Մարինե Ղաջոյան	Հաշվապահ	3 ամիս	ֆինանսական հոսքերի վերահսկում, ֆինանսական հաշվետվությունների ներկայացում:
Աննա Դադոյան	Կամավոր	2 ամիս	Անգլերենի ուսուցման իրականացում՝ որպես ներդրում:
Էմմա Դադոյան	Կամավոր	2 ամիս	Անգլերենի ուսուցման իրականացում՝ որպես ներդրում:
Լուսինե Թոփլաղալցյան	Փորձագետ	1 ամիս	Իրականացնելու է Քաղաքացիական մասնակցություն և կամավորություն» խորագրով 1-4-րդ դասընթացները: Դասընթացներն իրականացվելու են որպես ներդրում:
Աննա Վարդանյան	Փորձագետ	1 ամիս	Իրականացնելու է 1 դասընթաց («Շրջակա միջավայրի պաշտպանություն» թեմայով)՝ որպես ներդրում:
Հասմիկ Խաչատրյան	Փորձագետ	1 ամիս	Իրականացնելու է ծրագրում նախատեսված մնացած դասընթացները:

3.6. Ծրագրի գնահատում և վերահսկում

Ելնելով աշխատանքային պլանից՝ կիրականացվի պլանավորվածի հետ համադրման գործընթաց: Վերահսկումը կիրականացվի ծրագրի ղեկավարի կողմից:

Դասընթացների ավարտին շահառուների լրացրած գնահատման թերթիկները հնարավորություն կտան տեսնել թերացումները, շտկել դրանք, փոփոխություններ իրականացնել շահառուների առաջարկություններով: Ծրագրային մյուս միջոցառումների ժամանակ ևս կառաջադրվեն հարցեր, որոնք նպատակ կունենեն պարզել, թե ծրագրային գործողությունները տանու՞մ են ծրագրի խնդիրների և նպատակի իրականացում:

6. Եզրակացություն

Հայտատու ՀԿ-ները ունեն ծրագրերի իրականացման փորձ, համապատասխան փորձառություն ունեցող աշխատակազմ, նյութական և տեխնիկական ռեսուրսներ առաջարկվող ծրագրի արդյունավետ իրականացման համար: Հատկանշական է, որ անգլերենի ուսուցումն իրականացվելու է որպես ներդրում: Թեև ներդրումը բյուջեում արտացոլված չէ, սակայն այն արժեքավոր է նրանով, որ երիտասարդ մարդիկ պատրաստակամություն են դրսևորել իրականացնել տևական աշխատանք, ինչն արդեն փոխօգնության, թիմային աշխատանքի և քաղաքացիական վարքի դրսևորում է:

Առաջարկվող ծրագիրն էականորեն կընդլայնի հայտատու կազմակերպությունների գործունեության շրջանակները՝ առիթ դառնալով նոր մարդկանց ներգրավելու, նոր համագործակցությունների հաստատման և երիտասարդների ներգրավման նոր հնարավորությունների ստեղծման առումներով:

Ներկա սոցիալ-տնտեսական և քաղաքակն ճգնաժամի պայմաններում յուրաքանչյուր երիտասարդ անձի զարգացմանն ուղղված ձեռնարկումները իրենց արդյունքներն են տալու դիվիդենտներով, քանի որ յուրաքանչյուր քաղաքացու ձևավորումը մեծ արժեք է մեր երկրի համար: Այս մեծ առաքելությանն են միտված առաջարկող ծրագրի հեռահար նպատակները:

Հուսով ենք, որ առաջարկը կարժանանա հավանության և հնարավորություն կունենանք կենսագործել մեր համայնքի և մեր երկրի համար իր բովանդակային էությամբ քաղաքացիական արժեքներ կարևորող այս ծրագիրը: